ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 ապրիլի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

54
(3263)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանի՝ վերջին տարիների հայտարարագրերը՝ հասկանալու համար, թե ինչ ունի նա:

«Ժողովուրդ»-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ասրյանի հայտարարագրերում տարիների ընթացքում արձանագրվել է որոշակի աճ: 2021 թվականին, երբ նա դադարեցրել է նախորդ պաշտոնը, նրա բանկային հաշիվների մնացորդը կազմել է 1,016,975 դրամ, կանխիկ դրամը՝ 710,528 դրամ, իսկ տարեկան եկամուտը՝3,606,591 դրամ:

2022 թվականին նա ձեռք է բերել բնակարան Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում՝ 28,500,000 դրամ արժողությամբ: Նույն տարվա վերջում նրա բանկային հաշիվների մնացորդը կազմել է 1,300,000 դրամ, կանխիկ դրամը՝3,000,000 դրամ, իսկ տարեկան եկամուտը՝ 11,589,764 դրամ: Միաժամանակ ձեւավորվել է նաեւ վարկային պարտավորություն՝22,938,888 դրամ:

2023 թվականին Ասրյանի բանկային հաշիվներում արդեն առկա է եղել 3,000,000 դրամ, կանխիկ դրամը կազմել է 3,500,000, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացած տարեկան եկամուտը՝ 14,450,760 դրամ: Վարկային պարտավորությունը նույն տարվա ավարտին կազմել է 20,470,000 դրամ՝ կապված բնակարանի ձեռքբերման հետ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Նիկոլ Փաշինյանը երեկ՝ վաղ առավոտյան ազդարարեց, որ մինչեւ 20 տարեկանների ֆուտբոլի աշխարհի առաջնությունը (2029թ.) տեղի է ունենալու Հայաստանում եւ Վրաստանում: Ֆուտբոլային աշխարհին մոտ կանգնած մեր աղբյուրները հայտնում են, որ Աշխարհի առաջնության հայտ էին ներկայացրել մոտ մեկ տասնյակ երկրներ, այդ թվում՝ Իսպանիան, Ճապոնիան եւ այլն: Հայաստանի եւ Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիաների նախագահներ Արմեն Մելիքբեկյանը եւ Լեւան Կոբիաշվիլին ՈՒԵՖԱ-ի գործկոմի անդամներ են եւ ստացել են աջակցություն անձամբ ՈՒԵՖԱ-ի նախագահ Ալեքսանդր Չեֆերինից: Բանակցությունների արդյունքում Եվրոպական երկրները հանել են իրենց հայտերը: Ի վերջո, Աշխահի առաջնության անցկացման համար հիմնական պայքարը ընթացել է Հայաստան-Վրաստան համատեղ հայտի եւ ասիական մի քանի երկրների միջեւ, որոնց մեջ առավել ակտիվ է եղել Ճապոնիան: Մոտ մեկ տարի տեւած երկարատեւ աշխատանքի արդյունքում (ըստ տեղեկությունների՝Նիկոլ Փաշինյանն անձամբ է ներգրավված եղել, ինչպես նաեւ ԿԳՄՍ նախարարը), ի վերջո, հաղթող է ճանաչվել հայ-վրացական համատեղ հայտը: Մեր տեղեկություններով՝ աշխարհի 2029թ. երիտասարդական առաջնությունը կայանալու է Հայաստանի ու Վրաստանի 3-ական քաղաքներում: Հայաստանում խաղերը կայանալու են Վանաձորում, Իջեւանում եւ Երեւանում:

Հունիսի 7-ին նախատեսվող ընտրություններին ընդառաջ՝ քաղաքական դաշտում առավել հաճախ բարձրաձայնվող խնդիրներից մեկն ընտրողների պասիվության միտումն է: Իշխանության ղեկավար Նիկոլ Փաշինյանի հիմնական մրցակիցները վերջին շաբաթներին արձանագրում են, որ հանրության զգալի հատվածը պարզապես չի ցուցաբերում ընտրություններին մասնակցելու ցանկություն եւ գյուղերում, եւ մայրաքաղաքում, եւ խոշոր քաղաքներում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր գրեթե բոլոր շտաբներում այս հանգամանքը դիտարկվում է որպես առանցքային մարտահրավեր: Նրանց գնահատմամբ՝ ընտրողների ցածր մասնակցությունը, հատկապես Երեւան քաղաքի օրինակով, կարող է աշխատել գործող իշխանության օգտին: Հիշեցնենք, որ Երեւանի 824.250 ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներից միայն 234.553 կամ 28,43%-ը մասնակցեց քվեարկությանը: Սա երբեւէ գրանցված ամենացածր ցուցանիշն է: Արդյունքում մոտ մեկ մլն բնակչություն ունեցող մայրաքաղաքում շուրջ 75 հազար ձայն հավաքած Տիգրան Ավինյանը կառավարում է մայրաքաղաքը:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Մայիսի 8-ին մեկնարկելու է ԱԺ ընտրությունների նախընտրական պաշտոնական քարոզարշավը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ այս պահին 19 քաղաքական ուժերը փորձում են հստակեցնել, թե որտեղից են մեկնարկելու եւ ինչ ձեւաչափով: Մենք տեղեկություններ ունենք, որ ընդդիմադիրները նպատակ ունեն նաեւ մեծ հանրահավաքով սկսել քարոզարշավը: Իշխանությունները եւս պլան են գծում, թե ինչպես են սկսելու քարոզարշավը: Ի դեպ, հստակ է, որ ՔՊ-ականներն էլի ավտոբուսներով են շրջելու տարբեր մարզերում՝Նիկոլ Փաշինյանի սոցիալական էջով ուղիղ եթերի ֆորմատով: Հիշեցնենք, որ մինչեւ քարոզարշավի մեկնարկն էլ Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ականները իրենց կոչած «ուրախ ավտոբուսով» շրջել են ՀՀ տարբեր մարզերում, Երեւանի տարբեր վարչական շրջաններում ու քարոզարշավ իրականացրել:



«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի մայիսի 6-ին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿԱ ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱ ԵԿԵՂԵՑԻ»

ArmLur.am-ը զրուցել է հոգեւոր տեր Ռուբեն վարդապետ Զարգարյանի հետ:

- Ինչպե՞ս եք իրականացնում Ձեր հոգեւոր ծառայությունը, եւ կա՞ն խոչընդոտներ:

- Հարց եք տալիս, որին այս պահին ես, ըստ էության, չեմ կարող պատասխանել: Ընդամենը մի քանի դիտարկում անեմ. Վեհափառի տնօրինության հետ կապված, որ ինձ է առնչվում, կա դատական վարույթ, կա հարկադիր բողոք, եւ կա քննչականի կողմից կանչ: Մնացածը դուք որոշեք՝ ինչպես է ընթանում հոգեւորականի ծառայությունը: Հոգեւորականի ծառայությունը միայն արտաքին ընթացք չէ, դա ներքին կարգ ու կանոն է, եւ հաճախ այն, ինչ թվում է խոչընդոտ, իրականում ընթացքի բնական մաս է:

- Ինչպե՞ս ընդունվեց Ալեն Սիմոնյանի այցը Պոլսո պատրիարքարան:

- Դուք երբ ասում եք «եկեղեցի», պետք է հասկանալ՝ ում նկատի ունեք: Մայր Աթոռը, Վեհափառը, հոգեւորականությունն ընդհանուր, թե կոնկրետ կառույց: Մենք այդ հարցը միասին չենք քննարկել, որովհետեւ Պոլսո պատրիարքության հետ կապված թեմաները միշտ զգայուն են: Նրանք գործում են այլ միջավայրում, այլ քաղաքական եւ հասարակական պայմաններում, եւ ցանկացած գնահատական կարող է սխալ ընկալվել կամ վնասել: Այդ պատճառով ես ձեռնպահ կմնամ գնահատական տալուց: Ընդունել են որպես պետական պաշտոնյայի այց, եւ դա այդ ձեւով էլ պետք է դիտարկել:

- Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ իշխանության՝ եկեղեցու բարեփոխման օրակարգը:

- Ես այստեղ ուզում եմ ավելի լայն տեսանկյունից խոսել: Հաճախ քաղաքական ծրագրերում ինչ-որ բան ասվում է, բայց դրա իրականացման ընթացքը լրիվ այլ է լինում: Այդ պատճառով ես միշտ ասում եմ՝ պետք է սպասել գործողություններին, ոչ թե միայն հայտարարություններին: Հոգեւոր կյանքում «վստահություն» հասկացությունը շատ ավելի խորն է, քան պարզապես կարծիք ունենալը: Հավատքը նշանակում է ոչ միայն համոզվածություն Աստծո գոյության մեջ, այլ նաեւ Նրա վրա ապավինում, կյանքի կառուցում Նրա ճշմարտությունների վրա: Եթե այդ հիմքը կա, ապա արտաքին քաղաքական գործընթացները չեն կարող հիմնովին խախտել եկեղեցու ներքին կյանքը:

- Կարգալույծ քահանաների հարցով ի՞նչ ընթացակարգ կա:

- Եկեղեցում չկա ինքնակամ կամ հուզական որոշում: Ամեն ինչ ունի իր ընթացակարգը: Նախ՝ տեղի է ունենում լսում, ապա՝ քննություն, ապա՝ գնահատում համապատասխան մարմինների կողմից: Եւ միայն դրանից հետո կարող է լինել որոշում՝ լինի դա վերականգնում, թե սանկցիա: Եթե կա զղջում, այն պետք է հաստատվի ոչ միայն խոսքով, այլ նաեւ գործով: Եկեղեցին միշտ բաց է վերադարձի համար, բայց վերադարձը միայն ներքին զգացողություն չէ՝ դա նաեւ պատասխանատվություն է:

- Ինչպե՞ս եք գնահատում դատարանի որոշումները եկեղեցու վերաբերյալ:

- Ես սա կասեմ սկզբունքային մակարդակով: Եկեղեցու ներքին կյանքը չի կարող նույնականացվել պետական իրավական համակարգի հետ: Կա աշխարհիկ պետություն եւ կա եկեղեցի՝ յուրաքանչյուրն իր իրավասություններով: Եկեղեցու ներսում հոգեւոր կարգավիճակը որոշվում է կանոնական իրավունքով, որը ձեւավորվել է դարերի ընթացքում եւ հիմնված է հոգեւոր ավանդության վրա: Երբ աշխարհիկ դատարանները փորձում են այդ դաշտ մտնել, դա արդեն սահմանների հարց է դառնում:

- Կա՞ն քաղաքական կամ իրավական ճնշումներ եկեղեցու վրա:

-Երբ պետության որեւէ մարմին անցնում է իր սահմանները եւ սկսում է կարգավորել եկեղեցու ներքին հարցերը, դա արդեն ընկալվում է որպես միջամտություն: Եկեղեցին չի կարող գործել որպես պետական կառույց, եւ պետությունն էլ չի կարող որոշել՝ ով է հոգեւորական, ով՝ ոչ: Այս տարբերակումը շատ կարեւոր է, որովհետեւ հենց դրա վրա է կառուցված եկեղեցու ազատությունը:

- Ինչպե՞ս են կարգավորվում եկեղեցական սանկցիաները՝ կարգալուծություն, նզովք եւ այլն:

- Եկեղեցու կյանքում սանկցիաները չեն դիտվում որպես պատիժ՝ աշխարհիկ իմաստով: Դրանք ավելի շատ պաշտպանական եւ ուղղիչ միջոցներ են: Կարգալուծությունը, օրինակ, կիրառվում է այն դեպքում, երբ հոգեւորականը խախտում է իր ուխտը կամ վտանգում է եկեղեցու ամբողջականությունը: Նզովքը եւս նույն տրամաբանության մեջ է. դա ոչ թե անձի դեմ ուղղված գործողություն է, այլ վարդապետական շեղումների դատապարտում: Եկեղեցին իր բնույթով առաջին հերթին ձգտում է վերականգնման, ոչ թե կործանման:

- Ինչպե՞ս եք վերաբերվում մեղադրանքներին հոգեւորականների հասցեին:

-Ես այս հարցում կուզենայի խուսափել անձնավորված գնահատականներից: Բայց ընդհանուր ասեմ՝ քրիստոնեական մտածողությունը երբեք չի կառուցվում դատապարտման վրա: Եկեղեցու ներսում խնդիրների լուծման առաջին ճանապարհը երկխոսությունն է, ոչ թե հրապարակային մեղադրանքը: Երբ խնդիրները դուրս են գալիս այդ դաշտից, դրանք սկսում են կորցնել իրենց հոգեւոր բնույթը եւ դառնում են հասարակական հակամարտություն:

- Կա՞մ արդյոք հոգեւորականների մեջ պառակտում:

- Ես կասեի՝ կան տարբեր կարծիքներ, տարբեր ընկալումներ, բայց եկեղեցու էությունը հենց այն է, որ այդ տարբերությունները չվերածվեն բաժանման: Քրիստոնեական ավանդույթում միասնականությունը միշտ վեր է անձնական դիրքորոշումներից: Եթե մենք կորցնում ենք այդ միասնականության գաղափարը, ապա կորցնում ենք նաեւ եկեղեցու հոգեւոր իմաստը:

- Նզովքը ինչպե՞ս է կիրառվում եկեղեցում:

- Նզովքը հաճախ սխալ է ընկալվում որպես անեծք, բայց իրականում դա վարդապետական սանկցիա է: Այն կիրառվում է ոչ թե անձի նկատմամբ ատելությամբ, այլ սխալ ուսմունքի եւ վտանգավոր գաղափարների դեմ: Եկեղեցու հիմնական լեզուն միշտ եղել է օրհնությունը: Նզովքը բացառություն է, ոչ թե կանոն:

(Շարունակությունը՝ հաջորդ համարում)

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՄԻՆՉԵՎ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏԸ

Ընթացիկ «կապույտ անձնագրերը» ՀՀ քաղաքացիների համար ուժի մեջ են լինելու մինչեւ դրանց վավերականության ժամկետի ավարտը: Այս մասին հայտնել է ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետ Նելլի Դավթյանը: Նա նշել է. «Միաժամանակ քաղաքացին ազատ է՝ դիմելու եւ ստանալու նոր կենսաչափական անձնագիր ցանկացած պահի: Նոր անձնագիր ստանալիս՝ քաղաքացու ունեցած նախկին անձնագրերը անվավեր են ճանաչվելու, քանի որ անձը չի կարողանալու միաժամանակ տիրապետել մեկից ավելի անձնագրերի:

Կենսաչափական անձնագիր չի նշանակելու, որ փաստաթուղթը պարզապես էլեկտրոնային կրիչով է (չիպ) լինելու: ՀՀ-ն այժմ գործընթաց է սկսել՝ ստորագրելու ICAO հատուկ գործիքակազմի (PKD) վերաբերյալ փաստաթուղթը, որտեղ երկրների միջեւ փոխանակվում են անձնագրերի անվտանգության թվային տվյալները: Այն «վստահության ցանց» է, որը թույլ է տալիս, որ այլ երկրներ արագ ստուգեն՝ արդյոք սահմանը հատող փաստաթուղթն իրական է, բարձրացնում է սահմանային վերահսկողության անվտանգությունն ու արագությունը, հեշտացնում է քաղաքացիների միջազգային տեղաշարժը»:

Հիշեցնենք՝ ներկայացվել է նոր նմուշի կենսաչափական անձնագրի դիզայնը, անձնագիրը կսկսի գործածվել արդեն այս տարվա աշնանից:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԽԱՂԱԼԻՔ



ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը վերահսկողական միջոցառումներ է իրականացրել «ՎԱՋԳԵՆ ԱՄՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» Ա/Ձ-ում: Այս մասին հայտնում է տեսչական մարմինը:

«Իրականացվել է խաղալիքի նմուշառում, որի արդյունքում պարզվել է, որ «Դինոզավր» անվանմամբ վաճառվող խաղալիքի բաղադրության մեջ առկա են երեխաների առողջության համար վտանգավոր (թունավոր) նյութեր:

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանի կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ՝նշված անվանմամբ խաղալիքի հետկանչման եւ ոչնչացման վերաբերյալ:

Տեսչական մարմինը հորդորում է բոլոր սպառողներին, որոնք ձեռք են բերել վերոնշյալ խաղալիքից, կապ հաստատել Տեսչական մարմնի հետ եւ վերադարձնել դրանք՝ երեխաների առողջության համար հնարավոր վնասներից խուսափելու նպատակով»,- ասվում է հաղորդագրության մեջ:

70.7 ՄԼՆ ԴՐԱՄ ԵԿԱՄՈՒՏ

ArmLur.am ուսումնասիրել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանի՝ 2024 թվականի գույքի, եկամուտների եւ ծախսերի տարեկան հայտարարագիրը, հասկանալու համար, թե ինչ ունի ՊՆ փոխնախարարը:

Սարգսյանը երկար տարիներ աշխատել է իրավապահ համակարգում՝ սկսելով քրեական հետախուզության օպերլիազորի պաշտոնից: Տարիների ընթացքում զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ ՀՀ ոստիկանությունում՝ ներառյալ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում:

2018թ. նշանակվել է ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ, ապա՝ ոստիկանության պետի պաշտոնակատար եւ հետագայում՝ ոստիկանության պետ: 2020թ. ազատվել է այդ պաշտոնից, իսկ 2021թ. հունվարի 8-ին նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ:

2024թ. հայտարարագիրը. գույք, մեքենա, վարկեր

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ըստ 2024թ. հայտարարագրի՝ Սարգսյանը Երեւանում ունի 3 միավոր համատեղ սեփականությամբ անշարժ գույք՝բնակարան, ավտոկայանատեղի եւ հողին ամրակայված մեկ այլ անշարժ գույք, որոնք ձեռք են բերվել հենց նույն օրը, մասնավորապես՝29/08/2018 գնման եղանակով, որը որոշակի կասկածներ է հարուցում: Նա նաեւ ունի 2013թ. արտադրության LEXUS մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2021թ.:

Հայտարարագրում նշված են նաեւ զգալի ֆինանսական պարտավորություններ.

փոխառություններ՝ «Օրդ Դեվելոփմենթ» ՍՊԸ-ից՝ ընդհանուր ավելի քան 56 միլիոն դրամ,

բանկային հաշիվների մնացորդ՝ մոտ 787 հազար դրամ,

կանխիկ դրամ՝3.5 միլիոն դրամ:

Եկամուտների մասով հետեւյալ պատկերն է՝

աշխատավարձ պաշտպանության նախարարությունից՝ավելի քան 15 միլիոն դրամ,

այլ եկամուտներ, այդ թվում՝ կենսաթոշակ եւ համալսարանից վճարումներ՝3 մլն դրամ,

ստացված վարկեր՝ շուրջ 52.5 միլիոն դրամ,

ընդհանուր եկամուտները կազմել են մոտ 70.7 միլիոն դրամ:

Տարվա վերջի դրությամբ վարկային պարտավորությունների մնացորդը կազմել է մոտ 51.9 միլիոն դրամ, իսկ տարվա ընթացքում վարկերի մարմանն ուղղված վճարումները՝ մոտ 14.9 միլիոն դրամ, երկուսն էլ բնակարանի ձեռքբերման համար վարկեր են:

Համեմատություն 2021 թվականի հետ

«Ժողովուրդ» օրաթերթը նաեւ ուսումնասիրեց 2021 թվականի հայտարարագիրը՝ հասկանալու ֆինանսական փոփոխությունների դինամիկան:

Այդ ժամանակ Սարգսյանի՝

բանկային հաշիվների մնացորդ չի եղել,

կանխիկ գումարը կազմել է 19 հազար դոլար եւ 3.5 միլիոն դրամ,

եկամուտները զգալիորեն ավելի ցածր են եղել՝ընդհանուր մոտ 21.8 միլիոն դրամ, հիմնականում աշխատանքի վարձատրությունից եւ կենսաթոշակից:

2021թ. նրա վարկային պարտավորությունները կազմել են մոտ 15.9 միլիոն դրամ, ինչը էականորեն պակաս է 2024թ. ցուցանիշից: Համեմատությունը ցույց է տալիս, որ 2021-ից 2024թթ. Արման Սարգսյանի՝

եկամուտները բազմապատկվել են,

վարկային պարտավորությունները զգալիորեն աճել են:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՐԱՆԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ

Իրանը ՄԱԿ Անվտանգության խորհրդին կոչ է արել վճռական քայլեր ձեռնարկել՝ դադարեցնելու Գազայի հատվածում ռազմական գործողությունները, ապահովելու կայուն հրադադար եւ պատասխանատվության ենթարկելու պատերազմական հանցագործությունների մեղավորներին: ՄԱԿ-ում Իրանի մշտական ներկայացուցիչ Սայիդ Իրավանին իր ելույթում նշել է, որ Գազան շարունակում է մնալ շրջափակման եւ ռազմական հարվածների տակ, իսկ հումանիտար մուտքի սահմանափակումները խորացնում են քաղաքացիական բնակչության տառապանքը: Նրա խոսքով՝ խնդրի ցանկացած լուծում պետք է ներառի մշտական հրադադար, օկուպացիոն ուժերի դուրսբերում եւ անխոչընդոտ հումանիտար հասանելիություն՝ միաժամանակ հարգելով պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Իրավանին նաեւ մեղադրել է Իսրայելին տարածաշրջանում ապակայունացնող գործողությունների համար՝ նշելով Սիրիայում եւ Լիբանանում իրականացվող հարվածներն ու միջազգային իրավունքի խախտումները: Բացի այդ, Իրանը պնդել է, որ ԱՄՆ-ն ու Իսրայելը պատասխանատու են Իրանի դեմ իրականացված ռազմական գործողությունների համար, որոնք, ըստ իրանական կողմի, հանգեցրել են հազարավոր քաղաքացիական զոհերի եւ ենթակառուցվածքների ավերման: Ելույթի վերջում Իրանի ներկայացուցիչը մերժել է իր երկրի հասցեին հնչող մեղադրանքները՝ դրանք անվանելով անհիմն, եւ ընդգծել, որ տարածաշրջանային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է անդրադառնալ հիմնական պատճառներին:

ՆՈՒՅՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ Է

Իրանի պատերազմի պատճառով ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը անսպասելիորեն հայտնվել է նույն իրավիճակում, ինչ նախկին նախագահներ Ջորջ Բուշ կրտսերը, Բարաք Օբաման եւ Ջո Բայդենը, որոնք պարտվել են Իրաքում եւ Աֆղանստանում: Սենատոր Ալեքսեյ Պուշկովը այս մասին գրել է իր Telegram ալիքում՝ մեկնաբանելով Թրամփի՝ Իրանի երկարատեւ ծովային շրջափակման ծրագրերը: Նրա խոսքով՝ Թրամփը նման սցենարը համարում է իր քաղաքական վարկանիշին պակաս վնասակար, քան ռազմական կորուստներով լի ցամաքային գործողությունը: Խորհրդարանականը նշել է, որ շրջափակման հետեւանքները կլինեն ԱՄՆ-ում բենզինի գների բարձրացումը եւ համաշխարհային շուկաներում ռեսուրսների պակասը:

«Ավելին, անավարտ պատերազմը, որը հակված է վերածվելու երկարատեւ, ցածր ինտենսիվության հակամարտության, չի օգնի Թրամփին եւ հանրապետականներին այս նոյեմբերին կայանալիք Կոնգրեսի ընտրություններում: Թրամփը, որը հաղթանակ տարավ պատերազմական կարգախոսների հիման վրա, կարծես թե անսպասելիորեն հայտնվել է նույն իրավիճակում, ինչ Բուշ կրտսերը, Օբաման եւ իրենից առաջ Բայդենը, որոնք խրված էին Իրաքում եւ Աֆղանստանում եւ, ի վերջո, պարտվել են 20-ամյա աֆղանական պատերազմում», - գրել է Պուշկովը:

ՀՀ ԱՆՁՆԱԳԻՐԸ ԿՓՈԽՎԻ

ԱՐԴՅՈ՞Ք ԿԱՐՄԻՐ ԳՈՒՅՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՆԹԱՏԵՔՍՏ ՈՒՆԻ

Երեկ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի հետ ունեցած աշխատանքային քննարկման ընթացքում ներկայացրել է Հայաստանում կենսաչափական անձնագրերի եւ նույնականացման քարտերի նոր համակարգի ներդրման ընթացքը: Փաշինյանը նշել է. «ՀՀ նոր կենսաչափական անձնագիրը արտացոլում է մեր ինքնությունը, պատմամշակութային ժառանգությունը եւ պետականությունը»: Փաշինյանը նաեւ նշել է, որ այս փոփոխության նպատակն է ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման գործընթացը ավարտին հասցնելը: Իր հերթին Սարգսյանն էլ հավելել է, որ սա գործողությունները ավարտին հասցնելու ուղիղ պահանջ է:

Հանդիպման ընթացքում նշվել է, որ նոր համակարգը քաղաքացիների համար հասանելի կլինի 2026 թվականի աշնանից: Միաժամանակ, հրապարակված տեղեկություններից եւ ներկայացված դիզայնային մոտեցումներից պարզ է դառնում, որ նոր անձնագրերի արտաքին տեսքը լինելու է կարմիր գունավորմամբ:

Հարցը հետաքրքրական է դառնում հատկապես այն համատեքստում, որ աշխարհի տարբեր երկրներում անձնագրերի գույները հաճախ դիտարկվում են ոչ միայն տեխնիկական, այլ նաեւ քաղաքական, տնտեսական կամ տարածաշրջանային նշանակության տեսանկյունից:

Հարցեր են առաջանում՝ արդյո՞ք սա պարզապես տեխնիկական կամ գեղագիտական ընտրություն է, թե ունի նաեւ միջազգային քաղաքական կամ ինտեգրացիոն ենթատեքստ:

Ի՞նչ են նշանակում անձնագրերի գույները աշխարհում

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձնագրերի գույները միասնական կանոններով չեն կարգավորվում: Ինչպես նշվում է միջազգային աղբյուրներում, յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում իր անձնագրի գույնը՝ հիմք ընդունելով քաղաքական, պատմական, կրոնական կամ տարածաշրջանային գործոններ:

Ընդհանուր առմամբ աշխարհում առավել տարածված են չորս հիմնական գույներ՝ կապույտ, կարմիր/մուգ կարմիր, կանաչ եւ սեւ: Սակայն կարեւոր է ընդգծել, որ այս բաժանումը ոչ թե իրավական, այլ սովորաբար կիրառվող դասակարգում է:

Կապույտ անձնագրերը հաճախ կապվում են «Նոր աշխարհի» երկրների հետ՝ օրինակ ԱՄՆ, Կանադա եւ մի շարք լատինամերիկյան ու կարիբյան երկրներ: Այս գույնը երբեմն նաեւ խորհրդանշում է ծովային աշխարհագրություն եւ տնտեսական միավորումներ:

Կանաչ անձնագրերը լայն տարածում ունեն իսլամական աշխարհում՝ կապված կրոնական ավանդույթների հետ, օրինակ՝ Սաուդյան Արաբիա, Պակիստան, Եգիպտոս: Սակայն կան նաեւ ոչ կրոնական օրինակներ, ինչպես Մեքսիկան կամ Վատիկանը:

Սեւ անձնագրերը համարվում են ամենահազվադեպը եւ օգտագործվում են միայն մի քանի երկրներում, օրինակ՝ Նոր Զելանդիա կամ որոշ աֆրիկյան պետություններ, որտեղ այն դիտարկվում է որպես ազգային ինքնության եւ պրակտիկ դիմացկունության խորհրդանիշ:

Կարմիր գույնը՝ քաղաքական եւ տնտեսական ենթատեքստերում

Կարմիր եւ մուգ կարմիր գույնի անձնագրերը աշխարհում ամենատարածվածներից են: Դրանք հատկապես բնորոշ են եվրոպական երկրներին: Եվրոպական միության գրեթե բոլոր անդամ պետությունները օգտագործում են մուգ կարմիր երանգ, ինչը համարվում է քաղաքական եւ տնտեսական ինտեգրացիայի խորհրդանիշ: Միեւնույն ժամանակ, Միացյալ Թագավորությունը Brexit-ից հետո իր անձնագիրը փոխեց մուգ կարմիր գույնից կապույտի՝ ընդգծելով ԵՄ-ից դուրս գալու հանգամանքը:

Կարմիր գույնի անձնագիր ունի նաեւ Շվեյցարիան, որտեղ այն համընկնում է պետական դրոշի գույնի հետ: Իսկ Թուրքիան, որը երկար տարիներ դիտարկվում է որպես ԵՄ անդամակցության հավակնորդ երկիր, նույնպես անցում է կատարել կարմիր գույնի անձնագրի:

Միեւնույն ժամանակ, հատկանշական է նաեւ մեր հարեւան Վրաստանի օրինակը, որտեղ եւս կիրառվում է մուգ կարմիր անձնագիր, ինչը հաճախ դիտարկվում է որպես եվրոպական ինտեգրացիոն գործընթացների արտաքին խորհրդանշական տարր:

Հայաստանի դեպքում նոր անձնագրի կարմիր գույնը առաջ է բերել քննարկումներ՝ արդյոք այն կարող է դիտարկվել որպես քաղաքական ուղղության կամ միջազգային ինտեգրման ազդակ: Արփինե Սարգսյանը գույնի փոփոխությունը հիմնավորում է այն փաստով, որ ԵՄ երկրները հիմնականում օգտագործում են հենց կարմիր գույնը, որը ըստ նախարարի բնութագրմամբ հետաքրքիր ժեստ է ԵՄ ստանդարտներին համապատասխանելու համար: Սակայն այստեղ կարելի է նշել, որ ICAO-ի (Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն) մոտեցմամբ՝ անձնագրի գույնը որեւէ ազդեցություն չունի վիզային ազատականացման կամ ճանապարհորդական հնարավորությունների վրա:

Աշխարհի փորձը ցույց է տալիս, որ անձնագրի գույնը հիմնականում խորհրդանշական է եւ չի ազդում քաղաքացիների շարժունակության վրա: Այնուամենայնիվ, տարբեր տարածաշրջաններում այն հաճախ ընկալվում է որպես քաղաքական կամ ինտեգրացիոն ազդանշան:

Հայաստանի դեպքում նոր անձնագրերի կարմիր դիզայնը կարող է դիտվել որպես եվրոպական ստանդարտներին մոտեցման տեխնիկական եւ խորհրդանշական քայլ, սակայն վերջնական գնահատականը կախված է ոչ թե գույնից, այլ իրական վիզային ռեժիմներից եւ միջազգային համաձայնագրերից:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆՁՆԱԲԱԲԵԼ Է ՊԱՏՐԱՍՏՎԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն իր օգնականներին հանձնարարել է պատրաստել Իրանի տեւական շրջափակման պլան: Այս մասին հայտնում է ՏԱՍՍ-ը՝ հղում անելով The Wall Street Journal թերթին: Ըստ նրանց տեղեկությունների՝ վերջին շրջանում Սպիտակ տան ղեկավարն արտահայտվել է ի նպաստ Իրանի տնտեսության վրա ճնշում գործադրելուն՝ թույլ չտալով նավերի, այդ թվում՝ նավթատար տանկերների ելքը Իրանի նավահանգիստներից: Ամերիկյան վարչակազմի ղեկավարի կարծիքով՝ մյուս տարբերակները՝ ռմբակոծությունների վերսկսումը կամ հակամարտությունից դուրս գալը, Վաշինգտոնի համար ավելի մեծ ռիսկեր են պարունակում, քան շրջափակման շարունակումը: Ինչպես նշում է հրատարակությունը, Թրամփը հակասական խորհուրդներ է ստանում Իրանի նկատմամբ հետագա գործողությունների վերաբերյալ: Որոշ պաշտոնյաներ բացահայտորեն կոչ են անում Սպիտակ տանը ուժեղացնել ճնշումը Թեհրանի վրա, սակայն կան նաեւ այնպիսիք, ովքեր մտահոգություն են հայտնում, որ Հորմուզի նեղուցը փակ պահելը կամ մարտական գործողությունների շարունակումը կվնասի ամերիկյան տնտեսությանը եւ կարող է չափազանց բացասաբար անդրադառնալ Հանրապետական կուսակցության համար ԱՄՆ Կոնգրեսի միջանկյալ ընտրությունների արդյունքների վրա:

ՀԱՆՔԱՎԱՅՐ Է ՓԼՈՒՔՎԵԼ

Իրանի արեւելքում գտնվող Հարավային Խորասան նահանգի Թաբաս քաղաքի մոտակայքում տեղի ունեցած ածխահանքի փլուզման հետեւանքով մեկ հանքափոր զոհվել է, եւս մեկը՝ վիրավորվել: Ինչպես հայտնել է Tabas Coal Company-ի հասարակայնության հետ կապերի բաժինը, փլուզումը տեղի է ունեցել Պարվադեհ հանքավայրում, որի հետեւանքով երկու աշխատակից մնացել էին փլատակների տակ: Վիրավոր հանքափորը դուրս է բերվել եւ տեղափոխվել է Թաբասի հիվանդանոց: Մյուս աշխատակցի որոնումները շարունակվել են մի քանի ժամ, որից հետո նրա մարմինը հայտնաբերվել է: Դեպքը տեղի է ունեցել առավոտյան ժամը 7-ի սահմաններում՝ կիսամեխանիկական եղանակով շահագործվող հանքային հատվածի փլուզման հետեւանքով: Պարվադեհի հանքավայրը, որը համարվում է Իրանի ածխարդյունաբերության կարեւոր կենտրոններից մեկը, երկար տարիներ է՝ բախվում է անվտանգության խնդիրների ստորգետնյա աշխատանքների ընթացքում:

ԴԵՌ ՉԵՆ ԳՏԵԼ

ՏՈԿՈՍՈՎ ՓՈՂ ՏԱԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔԸ

Շենգավիթում տարեց կնոջը դանակի բազմաթիվ հարվածներով սպանելու դեպքով մինչ օրս որեւէ անձ ձերբակալված չէ: Իրավապահ համակարգում իրականացվում է բազմակողմանի քննություն:

Շենգավիթ վարչական շրջանում կնոջը դանակի հարվածներով սպանելու դեպքից ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել: Տարեց կինը, ըստ նախնական վարկածի, նշված հասցեում ապրել է թոռան հետ: Վերջինս աշխատանքի է եղել եւ երբ վերադարձել է տուն, հայտնաբերել է տատիկին սպանված, իսկ տունը՝ տակնուվրա արված:

Ըստ նախնական վարկածի՝ ենթադրյալ հանցագործը կամ հանցագործները բնակարան են մտել գողության նպատակով եւ սպանել են կնոջը: Նախնական տեղեկությունների համաձայն՝ սպանված կինը տոկոսով գումար է տվել մարդկանց (փոխառություն), եւ չի բացառվում, որ ենթադրյալ հանցագործները տեղեկացված են եղել այդ մասին ու իրականացրել են ավազակային հարձակում: Այս պահին ձերբակալված անձ չկա, իրավապահները իրականացնում են օպերատիվ աշխատանքներ: Վարկած կա նաեւ, որ հնարավոր է, տարեց կնոջ նկատմամբ հաշվեհարդար են տեսել տոկոսով գումար վերցնողները:

Հիշեցնենք, որ հայտնել էինք՝ ապրիլի 9-ի գիշերը օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի փողոցի բնակարաններից մեկում կնոջ դի կա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ դեպքի վայր էր ժամանել ՀՀ ՆԳ նախարարի տեղակալ, ոստիկանապետ Կամո Ցուցուլյանը: Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր են ժամանել նաեւ քրեական եւ համայնքային ոստիկանները: Հայտնաբերվել են նաեւ արնանման հետքեր:

Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, որոնք հրաժարվել են տեսախցիկի առաջ խոսել, ասում էին. «Սպանված կինը բարեկամներ ունի Միացյալ Նահանգներում եւ, կարելի է ասել, միայնակ էր բնակվում: Այսօր մինչեւ ժամը 12:00-13:00-ը նա պատասխանել է իր հարազատների հեռախոսազանգերին, իսկ ժամը 13-ից հետո, երբ սկսել է չպատասխանել, ազգականը եկել է տուն եւ հայտնաբերել նրան մահացած, իսկ տունը՝ ամբողջությամբ տակնուվրա արված»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿՐԱԿՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՅՀՈՅԱՆՔՆԵՐ

2025 թվականի օգոստոսի 14-ի առավոտյան կրակոցներ են հնչել Կոտայքի մարզում՝ կամրջի տակ գտնվող հատվածում: Կրակոցների կիզակետում է հայտնվել պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի նախկին խորհրդական Արտակ Տոնոյանի որդին՝ Արտաշես Տոնոյանը: Միջադեպի հետեւանքով մեկ անձ է զոհվել, եւ այժմ քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, գործը ուղարկվել է դատարան: Դեպքից հետո ՊՆ-ն հայտնել է, որ գեներալ-մայոր Արտակ Տոնոյանը ազատվել է նախարարի խորհրդականի պաշտոնից: Արտաշես Տոնոյանին մեղադրանք է առաջադրվել ապօրինի զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու, պահելու եւ կրելու, ինչպես նաեւ սպանության եւ խուլիգանության հոդվածներով: Ըստ քննության տվյալների՝ նա, առանց համապատասխան թույլտվության, ձեռք է բերել եւ կրել հրազեն, ռազմամթերք եւ նռնակ: 2025 թվականի օգոստոսի 14-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, նա ընկերների եւ այլ անձանց հետ գտնվել է Պռոշյան բնակավայրի վարչական տարածքում, որտեղ տեղի է ունեցել վիճաբանություն եւ քաշքշուկ: Վիճաբանության ընթացքում, ըստ նյութերի, հնչել են վիրավորական արտահայտություններ եւ սեռական բնույթի հայհոյանքներ, ինչը վերաճել է խուլիգանության: Այնուհետեւ Արտաշես Տոնոյանը իր մոտ եղած հրազենից արձակել է 7 կրակոց եւ պայթեցրել նռնակ, որի հետեւանքով Մամիկոն Այվազի Դավթյանը ստացած վնասվածքներից մահացել է 2025 թվականի օգոստոսի 15-ին: Նշվում է, որ գործով կան նաեւ այլ անձինք, որոնց ինքնությունը մասամբ դեռ չի պարզվել: Արտաշես Տոնոյանը կալանավորված է:



ԱՂՋԿԱ ՀԱՐՑ

ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել «88» սուպերմարկետների սեփականատեր Նարեկ Նալբանդյանին պատկանող Ծաղկաձորի հյուրանոցում 36-ամյա տղամարդու մահվան դեպքից: Ըստ նախնական վարկածի՝ վերջինիս ինքնավնասելու եւ 4-րդ հարկի պատուհանից ցած նետվելու քայլը կապ է ունեցել անձնական կյանքի հետ: Մասնավորապես սիրելի էակից մերժում ստանալու հետեւանքով է նա գնացել այդ քայլին:

ArmLur.am-ը հայտնել էր, որ «88» սուպերմարկետների սեփականատեր Նարեկ Նալբանդյանին պատկանող Ծաղկաձորի հյուրանոցում 36-ամյա տղամարդը փորձել է նռնակ պայթեցնել, սակայն նրան չի հաջողվել դա իրականացնել, որից հետո ինքնավնասում է արել եւ հյուրանոցի 4-րդ հարկից ցած նետվել:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ ապրիլի 24-ին առեղծվածային մահվան դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 10:00-ի սահմաններում ՀՀ ՆԳ նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Հրազդանի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Ծաղկաձոր քաղաքում գտնվող «Էյթի Էյթ Հոթել ընդ Սպա» հյուրանոցային համալիրի բակում դի կա:Իրավապահները պարզել են, որ մահացածը Վայոց ձորի մարզի բնակիչ Աշոտ Խ.-ն է:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ ԵՆ ԿԱՆԽԵԼ

Քրեական ոստիկանության Լոռու մարզի ծառայողները ապրիլի 26-ին Վանաձոր քաղաքում սպանության դեպք են կանխել:

ՆԳՆ ոստիկանությունից NEWS.am-ին հայտնում են, որ ձեռնարկած համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում քրեական ոստիկանները փաստական տվյալներ են ձեռք բերել, որ Վանաձոր քաղաքի բնակիչ մի խումբ երիտասարդներ 36-ամյա համաքաղաքացու հետ ունենալով թշնամական հարաբերություն՝ նախնական համաձայնությամբ նախապատրաստել են նրա սպանությունը, ինչպես նաեւ նախապատրաստել ավազակային հարձակումներ ու բնակարանային գողություններ:

Ըստ տեղեկությունների՝ պարզելով բնակության հասցեն՝ երիտասարդները գրեթե ամեն օր զենքով ու դանակներով զինված դարանակալումներ են իրականացրել 36-ամյա համաքաղաքացու տան մոտ: Հանցավոր մտադրությունը փորձել են իրականացնել մարտի 22-ին, սակայն ավարտին չեն հասցրել:

Լոռու մարզային քննչական վարչությունում ապրիլի 18-ին նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քրեական ոստիկանների ձեռնարկած միջոցառումների արդյունքում դեպքի երեք մասնակից կալանավորվել է, մեկը՝ ձերբակալվել:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ մյուս մասնակցին հայտնաբերելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

ՀՐԴԵՀԻ ԱՀԱԶԱՆԳ

Ապրիլի 29-ին՝ ժամը 02:22-ին, ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Տիչինայի փողոցում գտնվող տներից մեկում:

Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից երեք մարտական հաշվարկ եւ հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժնի հերթապահ խումբը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 03:05-ին, մարվել՝ 03:18-ին: Այրվել է երկհարկանի տան երկրորդ հարկը (մոտ 90 քմ):

Հրշեջ-փրկարարները տարհանել են 10 քաղաքացու:

Հրշեջ-փրկարարներին հաջողվել է կանխել հրդեհի տարածումը դեպի առաջին հարկ եւ կից երկու տներ:

● *Ապրիլի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 9 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 1-ը:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Նիկոլ Փաշինյանը ապրիլի 26-ին Տավուշի մարզ այցելության ընթացքում լրագրողի, ավելի ճիշտ զբոսավարի նման լայվերով ներկայացրել է Տավուշում կառուցված ճանապարհները: Փաշինյանին անտառում ներկայացրել են Ենոքավան-Ջուջեւան ավտոճանապարհի ծրագիրը, որի փոքր մասն է կառուցվել, մնացածը դեռ նախագծման փուլում է: Փաշինյանը հայտարարել է, թե Հայաստանի մայրուղիներում խցանումներ էին առաջացել, դրանք հաղթահարելու համար ճիշտ լուծում չէր լինի լայնացնել այդ մայրուղիները, այդ պատճառով այլընտրանքային ճանապարհներ են կառուցել՝ որպես օրինակ նշելով Տավուշի մարզում կառուցված այլընտրանքային ճանապարհները: Փաշինյանը ճիշտ չի ասել, Տավուշի մարզում, ընդհանրապես Հայաստանի ճանապարհներին խցանումներ չեն լինում: Ավտոմեքենաների խցանումները մեծամասամբ մայրաքաղաք Երեւանում են: Տավուշում գործարկված կարեւոր ճանապարհներից է մարզկենտրոն Իջեւանը Բերդ համայնքին կապող ճանապարհի Գանձաքար-Իծաքար մոտ 35 կիլոմետր երկարությամբ հատվածը: 1990-ական թվականների երկրորդ կեսին է կառուցվել այդ ճանապարհը, սակայն այն ասֆալտապատ չէր, հողային շերտից էր: Այդ ճանապարհի հիմնանորոգումը կամ կառուցապատումը սկսվել է 2022 թվականին, նախատեսվում էր ավարտել 2023թ. սեպտեմբերին, սակայն այն նախատեսված ժամկետից ավելի քան 2 տարի ուշ գործարկվեց: Խախտվել է նաեւ Գեղարքունիքի մարզը Բերդ համայնքին կապող Թթուջուր-Նավուր ավտոճանապարհի կառուցման ժամկետը: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը, լրագրողիս հարցմանն ի պատասխան, հայտնել է, որ այդ ճանապարհը պետք է շահագործման հանձնվեր դեռեւս 2024թ. նոյեմբերին, սակայն կապալառուի մեղքով հետաձգվել է, որի համար կապալառու շինարարական կազմակերպությունը ենթարկվել է ֆինանսական տույժի: Մի այլ խնդիր էլ կա, որ լուծում է պահանջում: Թթուջուր-Նավուր, Գանձաքար-Իծաքար ճանապարհները Գեղարքունիքի մարզը եւ Իջեւանը կապում են Բերդ համայնքին, սակայն գործարկված այդ ճանապարհների շարունակությունը՝ Նավուր-Բերդ մոտ 10 կիլոմետրանոց հատվածը անբարեկարգ, փոսառատ է, խնդիրներ է առաջացնում երթեւեկության համար: Փաշինյանի իշխանության օրոք մեծ ծավալի ասֆալտապատում է կատարվել, որի պատճառները մի քանիսն են: Փաշինյանն ինքն է խոստովանել, որ իրենք ասֆալտ շատ են սիրում: Դե փողը ասֆալտի մեջ է: Վերջին 8 տարում զարգացման մեծ ծրագրեր չեն իրականացվել, ասֆալտապատումներով փորձում են փակել այդ բացը, հանրության վրա մեծ գործերի տպավորություն թողնել: Ասֆալտապատ ճանապարհների էֆեկտն այն է, որ դրանք բոլորին են տեսանելի, դրանցից բոլորն են օգտվում: Թե այդ ասֆալտապատումները պետբյուջեից, վարկերով են արվել, նախատեսված ժամկետից որքան ուշացումով, ինչ որակով, քանի տարի պիտանելիության ժամկետով են արվել, իշխանական քարոզչությունն աշխատում է այդ հարցերն անտեսել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՆ-Ի 250-ԱՄՅԱԿ

ԹՐԱՄՓԻ ԴԻՄԱՆԿԱՐՈՎ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳՐԵՐ

ԱՄՆ-ում նախատեսվում է թողարկել սահմանափակ քանակությամբ անձնագրեր, որոնցում կներկայացվի երկրի նախագահ Դոնալդ Թրամփի դիմանկարը: Այս մասին հաստատել է Սպիտակ տունը:

Ինչպես առաջինը հաղորդել է Fox News-ը, հատուկ ձեւավորման անձնագրերը կթողարկվեն հուլիսին՝ ԱՄՆ Անկախության հռչակագրի 250-ամյակի տոնակատարությունների շրջանակում:

Վարչակազմի ներկայացուցիչը BBC-ին հայտնել է, որ նոր դիզայնով անձնագրերը հասանելի կլինեն «ցանկացած ամերիկացի քաղաքացու» համար՝ դիմելու դեպքում, եւ կմնան շրջանառության մեջ այնքան ժամանակ, որքան կշարունակվի դրանց առկայությունը:

Միաժամանակ նշվում է, որ այս անձնագրերը հասանելի կլինեն միայն Վաշինգտոնի անձնագրային գործակալությունում:

ԱՄՆ Պետդեպարտամենտի հրապարակած պատկերում երեւում է, որ Թրամփի դիմանկարը շրջապատված է Անկախության հռչակագրի տեքստով եւ ամերիկյան դրոշով, ինչպես նաեւ նախագահի ոսկեգույն ստորագրությամբ:

Սպիտակ տան ներկայացուցիչը նշել է, որ այս նախաձեռնությունը եւս մեկ միջոց է, որպեսզի ամերիկացիները մասնակցեն երկրի 250-ամյակի տոնակատարություններին՝ ընդգծելով ազգային հպարտությունն ու հայրենասիրությունը:

Ներկայիս ԱՄՆ անձնագրերում պատկերված են երկրի պատմության կարեւոր դրվագներ, այդ թվում՝ Լուսնի վրա վայրէջքը, ինչպես նաեւ ազգային խորհրդանիշներ, օրինակ՝ Ազատության արձանը:

Դեռեւս պարզ չէ՝ քաղաքացիները կկարողանա՞ն հրաժարվել այս հատուկ տարբերակից:



Թրամփի անվան եւ կերպարի ընդգծումը պետական ծրագրերում

Հուշանվեր անձնագիրը վերջին նախաձեռնություններից մեկն է, որով վարչակազմը փորձում է կապել Թրամփի անունը տարբեր պետական ծրագրերի եւ հանրային կառույցների հետ:

ԱՄՆ դրամահատարանը հայտարարել է նաեւ 250-ամյակին նվիրված ոսկե հուշադրամ թողարկելու ծրագրերի մասին, որտեղ նույնպես կներկայացվի Թրամփը: Բացի այդ, նախատեսվում է, որ նա դառնա առաջին գործող նախագահը, որի ստորագրությունը կհայտնվի ԱՄՆ թղթադրամների վրա:

John F. Kennedy Center for the Performing Arts-ի ղեկավար խորհուրդը քվեարկել է կենտրոնը «Թրամփ-Քենեդի կենտրոն» վերանվանելու օգտին, ինչը քննադատության է արժանացել նախագահ John F. Kennedy-ի ընտանիքի անդամների կողմից:

Ապրիլի սկզբին Սպիտակ տունը ներկայացրել է նաեւ «Arc de Trump» անվամբ ոսկեգույն հսկայական հաղթական կամարի կառուցման նախագիծը Վաշինգտոնում, որը, չնայած հասարակության եւ մասնագիտական շրջանակների բացասական արձագանքին, ստացել է նախնական հավանություն:

Բացի այդ, նախագահը փոփոխություններ է նախաձեռնել նաեւ Սպիտակ տանը՝ քանդելով շենքի արեւելյան թեւը՝ նոր պարահրապարակ կառուցելու նպատակով:

Այս ծրագրերի դեմ արդեն դատական հայց է ներկայացրել National Trust for Historic Preservation-ը՝ պնդելով, որ շինարարությունը սկսվել է առանց անհրաժեշտ հաստատումների:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՐԱՎԻՐՎԵԼ ԵՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Իսրայելի նախագահ Իցհակ Հերցոգի իրավական խորհրդական Միխալ Ցուկը գլխավոր դատախազին եւ վարչապետ Բենիամին Նեթանյահուի փաստաբանին հրավիրել է նախագահական նստավայր՝ վարչապետի քրեական դատավարության վերաբերյալ համաձայնությունների հասնելու նպատակով: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է The Times of Israel-ը:

Հերցոգի իրավական խորհրդականն Իսրայելի գլխավոր դատախազին եւ Նեթանյահուի փաստաբանին ուղղված նամակում նշել է, որ «պայմանավորվածությունը» կբխի երկրի շահերից՝ հավելելով, որ նախագահը մի քանի անգամ հրապարակավ արտահայտել է այս դիրքորոշումը:

Ավելի վաղ Հերցոգը բացառել էր Նեթանյահուի ներման խնդրանքի բավարարումն այս փուլում, իսկ իսրայելական լրատվամիջոցները հաղորդել էին, որ նախագահը հակված չէ հակառակվել Արդարադատության նախարարության ներման վարչության խորհրդին, որը հայտարարել էր, որ վարչապետի խնդրանքը չի համապատասխանում ներման չափանիշներին:

«Այս գործընթացը ներկայացնում է միայն նախնական քայլ, նախքան նախագահը կքննարկի իր ներման լիազորությունների կիրառումը: Կողմերին խնդրել են ներկայանալ հնարավորինս շուտ», - ասվում է նախագահական գրասենյակի հայտարարության մեջ:

Ցուկը նամակում նշել է, որ «նախագահը եզրակացրել է, որ վարչապետի դեմ ներկայացված ներման լիազորության կիրառումը քննարկելուց առաջ անհրաժեշտ է նախ սպառել կողմերի միջեւ բանակցությունների բոլոր հնարավորությունները՝ (Նեթանյահուի դեմ գործերի վերաբերյալ) համաձայնության հասնելու համար»: Նա խնդրել է պատասխանել հրավերին մինչեւ մայիսի 3-ը:

Հերցոգը հետաձգել է Նեթանյահուին ներում շնորհելը, չնայած ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի մեծ ճնշմանը, որը բազմիցս անձամբ քննադատել է Հերցոգին՝ պահանջելով, որ նա անմիջապես ներում շնորհի վարչապետին:

Նեթանյահուն Իսրայելի առաջին գործող վարչապետն է, որը դատարանի առաջ է կանգնել: Նա մշտապես հերքել է իր դեմ ուղղված մեղադրանքները՝ կապված կաշառակերության, խարդախության եւ վստահության չարաշահման հետ:

Վարչապետը պաշտոնապես ներում է խնդրել նոյեմբերին՝ պնդելով, որ դատավարությունը մասնատում է երկիրը եւ շեղում իրեն իր պարտականություններից:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ ապրիլի 27-ից 28-ը բացահայտվել է 3-ական դեպք՝ հոգեկան ներգործության, շորթման, թմրանյութի իրացման:*

ԲԱՆԿԵՐ

ԱՐԱԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ

Ժամանակն է լիարժեք վայելել Հայէկոնոմբանկի Mastercard World քարտի առավելությունները՝ օգտագործելով Apple Pay-ը: Apple Pay-ը հասանելի է բոլոր Apple սարքերում՝ iPhone, Apple Watch, iPad, Mac, and Apple եւ Vision Pro: Քարտը Apple Wallet-ին հնարավոր է կցել ինչպես Apple Pay դրամապանակից, այնպես էլ AEB Mobile հավելվածից: Apple Pay-ն աշխարհի ավելի քան 75 երկրներում ամենօրյա անհպում վճարումներ անելու արագ եւ անվտանգ տարբերակ է:

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

«ԼԵՍՆՈՅ»՝ ՊԱՀԱՆՋՎԱԾ ՎԱՅՐ

«Լեսնոյ» համալիրն արդեն ավելի քան 10 տարի հանդիսանում է ընտանեկան հանգստի, զբոսաշրջության եւ հյուրասիրության սիրված վայրերից մեկը ոչ միայն լոռեցիների, այլեւ Հայաստանի տարբեր անկյուններից ու արտերկրից այստեղ ժամանող զբոսաշրջիկների համար: Զրոյից ստեղծված այս բիզնեսն առանձնանում է ոչ միայն իր յուրահատուկ ձեռակերտ միջավայրով, այլեւ Լոռիի տեղական մթերքի վրա հիմնված խոհանոցով:

Բիզնեսի հիմնադիր Մկրտիչ Ղազարյանի խոսքով՝ «Լեսնոյի» գաղափարը ծնվել է ընկերների հետ ճանապարհորդությունից, իսկ իրականություն է դարձել իր աշխատանքի շնորհիվ. այստեղ գրեթե ամեն ինչ կառուցվել է հենց իր ձեռքերով:

Բիզնեսի կայացման եւ զարգացման ամբողջ ընթացքում կարեւոր դեր է ունեցել Կոնվերս Բանկի հետ համագործակցությունը: Գործընկերությունը սկսվել է դեռեւս հիմնադրման փուլում եւ շարունակվում է մինչեւ հիմա՝ ներառելով Converse SME, Converse Leasing պրոդուկտների շրջանակում ֆինանսավորումը:

Այսօր «Լեսնոյ»-ը նախատեսում է ընդլայնվել՝ հիմքում ունենալով նույն գաղափարը. ստեղծել մի վայր, որտեղ բնությունը, համն ու մարդկային աշխատանքը միավորվում են մեկ ամբողջական փորձառության մեջ, Լոռու սրտում: *(Գ)*

IDBANK

«ՁԵՐ ՀԱՐԱՋԱՏԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Է»

Վերջերս Հայաստանը բախվել է զեղծարարների հոգեբանական ամենածանր սխեմաներից մեկի վերադարձի հետ: Թեեւ այն ունի երկար տարիների պատմություն, «հարազատի վտանգի մեջ լինելու» լեգենդը մեր հանրապետությունում նոր ակտիվության գագաթնակետի է հասել՝ շահագործելով ամենազգայունը՝ սերը մտերիմների հանդեպ եւ նրանց կորստի վախը:



Խաբեության մեխանիզմը. սցենար, որը խաղում է զոհի զգացմունքների հետ

Զեղծարարներն օգտագործում են Ձեր շոկային վիճակը: Զանգը կարող է ստացվել թե՛ ֆիքսված, թե՛ բջջային հեռախոսին: Զրուցակիցը ներկայանում է որպես բժիշկ, քննիչ կամ ոստիկանության աշխատակից եւ հայտնում է դժբախտ լուրը. ձեր մտերիմ անձը ծանր ավտոտրանսպորտային պատահարի մասնակից է դարձել, այժմ գտնվում է վերակենդանացման բաժանմունքում կամ ձերբակալված է լուրջ իրավախախտման համար:

Ավելի իրական թվալու համար զեղծարարները հաճախ կրկնօրինակում են այդ հարազատի ձայնը՝ կողքից լսվում է լաց, խանգարող ազդանշաններ կամ դժվարությամբ հասկացվող օգնության կոչեր: Դրանից հետո «պաշտոնական անձը» առաջարկում է լուծում. օրինակ՝ շտապ մեծ կանխիկ գումար փոխանցել առաքիչին, կամ «գործի փակման համար» փոխանցում կատարել կամ էլ շտապ վիրահատման համար կատարել վճարում: Այստեղ գլխավոր գործիքը ձեզ շտապեցնելն է: Զոհին չեն թողնում անջատել զանգը՝ ստիպելով գործել պահի ազդեցության տակ:

Այս սխեման հատկապես վտանգավոր է տարեցների դեպքում: Զեղծարարները արթնացնում են մեղքի զգացում՝ ստուգելու եւ մտածելու ժամանակ չտալով:

Իրավաբանական ծուղակ

Այս մեթոդի խորամանկությունը կայանում է գումարի փոխանցման տարբերակների մեջ: Երբ գումարը կանխիկ փոխանցվում է առաքիչին կամ ուղարկվում է անհայտ քարտի կամ էլեկտրոնային դրամապանակի, հետվերադարձի իրավական մեխանիզմները գրեթե չեն մնում: Բանկը չի կարող չեղարկել այն գործընթացը, որը կատարվել է հաշվի սեփականատիրոջ կողմից՝ հույզերի ազդեցության տակ, իսկ այս շղթայում ներգրավված «առաքիչները» հաճախ պարզապես անհետանում են առանց հետքերի:

IDBank-ը խորհուրդ է տալիս.

Մտերիմներին օգնելու ձեր պատրաստակամությունը հիանալի որակական հատկանիշ է, որը չպետք է դառնա գործիք զեղծարարների ձեռքում: Ձեզ եւ ձեր ընտանիքին պաշտպանելու համար անհրաժեշտ է հիշել.

Խուճապի մի՛ մատնվեք: Դադար վերցրեք, շունչ քաշեք եւ ասեք. «Ես կզանգահարեմ»:

Միանգամից ստուգե՛ք տեղեկատվությունը: Ինքներդ զանգահարեք հարազատին, կամ եթե նա չի պատասխանում, կապվե՛ք այլ հարազատների հետ:

Ոչ մի գումար առաքիչներին: Պետական մարմինների կամ հիվանդանոցների իրական աշխատակիցները երբեք չեն ուղարկի մարդկանց գումարի հետեւից: Սա օրենքի ուղղակի խախտում է եւ զեղծարարության ազդանշան:

Ստուգե՛ք լեգենդը: Տվեք ճշգրտող հարց, որին կողմնակի անձինք չեն կարող պատասխանել: Զեղծարարը միանգամից կդադարեցնի խոսակցությունը:

Զանգե՛ք ոստիկանություն: Անգամ, եթե ժամանակին հասկացել եք, որ ձեզ խաբում են, անպայման տեղեկացրեք ոստիկանությանը: Ձեր հայցը կօգնի բլոկավորել զեղծարարների հեռախոսահամարները եւ պաշտպանել նրանց, ովքեր կլինեն ոչ այնքան ուշադիր:

Հիշե՛ք. այս սխեման հիմնված է հանկարծակիության եւ վստահության չարաշահման վրա: Ձեր գումարները կլինեն անվտանգ այնքան ժամանակ, քանի դեռ դուք ինքներդ չեք առաջարկել դրանք զեղծարարներին՝ հույզերի ազդեցության տակ:

IDBANK-ը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՆԱՎԹԻ ԳՆԵՐԸ ԱՃԵԼ ԵՆ

Նավթի համաշխարհային շուկաներում առաջացել է լուրջ անկայունություն այն բանից հետո, երբ Արաբական Միացյալ Էմիրությունները հայտարարել է, որ դուրս է գալիս OPEC-ից եւ դրա ընդլայնված ձեւաչափից՝OPEC+-ից: Որոշումը, որը ուժի մեջ կմտնի ուրբաթ օրվանից, համարվում է կազմակերպությունից տարիներ տեւած անդամակցության ավարտ:

Այս քայլը տեղի է ունենում Մերձավոր Արեւելքում շարունակվող լարվածության եւ Իրանի հետ հակամարտության ֆոնին, ինչպես նաեւ Հորմուզի նեղուցում նավագնացության սահմանափակումների պայմաններում, ինչը լրացուցիչ ճնշում է ստեղծում համաշխարհային էներգետիկ շուկաների վրա:

Շուկաները անմիջապես արձագանքել են. նավթի գները սկզբում նվազել են մոտ 2-3 տոկոսով՝ ավելցուկային մատակարարման սպասումների պատճառով, սակայն կարճ ժամանակ անց կրկին բարձրացել են՝ աշխարհաքաղաքական ռիսկերի աճի հետեւանքով: Ներկայում ԱՄՆ WTI նավթը գերազանցում է 105 դոլարը մեկ բարելի համար, իսկ Brent տեսակի նավթը՝ 112 դոլարը:

Վերլուծաբանների գնահատմամբ՝ ԱՄԷ-ի դուրս գալը կարող է թուլացնել ՕՊԵԿ-ի ազդեցությունը շուկաների վրա եւ մեծացնել ԱՄՆ նավթարդյունահանողների դերը, մինչդեռ Հորմուզի նեղուցում շարունակվող լարվածությունը շարունակում է մնալ համաշխարհային էներգետիկ անվտանգության հիմնական ռիսկերից մեկը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ

ՈՍԿՈՒՅՑ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻՑ ՇԱԽՄԱՏԻ ՏԱԽՏԱԿ

Երիտասարդ նկարիչ եւ ոսկերիչ Իոսիֆ Արզումանով-Դեդինը Վենետիկի Դրիս Վան Նոտենի հիմնադրամի ցուցահանդեսում ներկայացրել է նոր աշխատանք՝ «L'echiquier des Songes» վերնագրով՝ գեղարվեստական շախմատի տախտակ, որը միահյուսում է ընտանեկան պատմությունը, տեխնոլոգիան եւ ավանդական արհեստները:



Նախագիծը նվիրված է նրա պապիկի եւ տատիկի սիրո պատմությանը, որոնք հանդիպել են ԽՍՀՄ-ում՝ Լենինգրադի մոտ, սառցակալած ծովի ափին: Ինստալյացիայի կենտրոնում շախմատի խաղ է, որը «խաղացվում» է արհեստական բանականությամբ կառավարվող ռոբոտացված ձեռքով: Այն ուսումնասիրում է տարբեր հնարավոր սցենարներ՝ կարծես փորձելով հաշվարկել բոլոր հնարավոր ուղիները, որոնք կարող էին հանգեցնել այս հանդիպմանը:

Աշխատանքը համատեղում է մի քանի առարկաներ՝ ոսկերչություն, քանդակագործություն եւ ժամանակակից տեխնոլոգիաներ: Ստեղծագործության մեջ օգտագործվում են ոսկի, արծաթ, թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, մարգարիտ, հայկական հրաբխային քար, մուրանո ապակի, փայտ, գործվածք, բրոնզ եւ պողպատ, ինչպես նաեւ ռոբոտացված տարրեր:

Արզումանով-Դեդինը ծնվել է 2002 թվականին եւ աշխատում է Փարիզում: Մեծանալով ֆրանկո-ռուսական ընտանիքում՝ հայկական եւ հրեական արմատներով, նա վաղ տարիքից զբաղվել է արհեստներով՝ սովորելով տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, որտեղ ուսումնասիրել է քանդակագործություն եւ նյութերի հետ աշխատելու ավանդական տեխնիկան:

Այսօր նա հայտնի է ավանդական արհեստների տեխնիկայի՝ մետաղամշակումից մինչեւ ասեղնագործություն, եւ ժամանակակից տեխնոլոգիաների՝ 3D մոդելավորման եւ տպագրության հետ համատեղելով:

Նկարչի խոսքով՝ իր նպատակն է վերաիմաստավորել դասական արհեստները եւ դրանք ավելի մատչելի դարձնել ժամանակակից սերնդի համար:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԱՏԼԵՏԻԿՈ»–«ԱՐՍԵՆԱԼ»

Չեմպիոնների լիգայի երկրորդ կիսաեզրափակիչ դիմակայությունը կայանալու է Մադրիդում. «Ատլետիկո»-ն հյուրընկալելու է «Արսենալ»-ին: Ի դեպ, այս մրցաշրջանում այս թիմերն արդեն մրցել են միմյանց դեմ: ՉԼ-ի 3-րդ տուրում «Ատլետիկո»-ն Լոնդոնում պարտվել է 0:4 հաշվով, սակայն կարողացել է ի վերջո ապահովել մասնակցությունը հետագա պայքարում՝ հաղթահարելով անցումային խաղերը:

«Արսենալ»-ը դարձել է առաջին թիմը, որին հաջողվել է բոլոր 8 խաղում էլ հաղթանակ տոնել, իսկ հետո ուժեղ լինել «Բայեր»-ից ու «Սպորտինգ»-ից՝ դուրս գալով կիսաեզրափակիչ:

«Արսենալ»-ի գլխավոր մարզիչ Միկել Արտետա. «Երկրորդ տարին անընդմեջ մենք ՉԼ-ի կիսաեզրափակչում ենք, ինչը մեծ պատիվ է մեզ համար: Արդեն մեր ուժը ցույց ենք տվել Եվրոպայի բոլոր ստադիոններում, պետք է նույն վստահությամբ ու ցանկությամբ գործենք նաեւ այս անգամ: Սա հիանալի հնարավորություն է, մենք պատրաստվում ենք բռնել այն ամուր ձեռքերով ու շարժվել առաջ»:

«Ատլետիկո»-ի գլխավոր մարզիչ Դիեգո Սիմեոնե. «Շատ մեծ նպատակ է հաղթել Չեմպիոնների լիգայում, մի բան, որն ակումբին անել դեռ չի հաջողվել: Ճնշում չկա, կա պատասխանատվություն: Անհավանական է, որ 14 տարվա մեջ 4-րդ անգամ «Ատլետիկո»-ն կիսաեզրափակչում է: Սա ֆուտբոլային հանդիպում է, որտեղ հենց ֆուտբոլիստներն են որոշում խաղի հաշիվը: Պետք է պայքարենք»:

ԳՈԼԱՌԱՏ ՈՒ ԴԻՏԱՐԺԱՆ

Չեմպիոնների Լիգայի կիսաեզրափակչում ՊՍԺ-ն ու «Բավարիա»-ն երկրպագուներին խելահեղ ու գոլառատ դիմակայություն են պարգեւել:

ՊՍԺ-ն 5:4 հաշվով ուժեղ է եղել Գերմանիայի չեմպիոնից: 17-րդ րոպեին Հարի Քեյնը դիպուկ է իրացրել 11-մետրանոցն ու առաջ մղել «Բավարիա»-ին, սակայն 7 րոպե անց Խվիչա Կվարացխելիան հավասարեցրել է հաշիվն ու քիչ անց նաեւ դուբլ ձեւակերպել: 33-րդ րոպեին հաշիվն ավելի խոշոր է դարձրել Ժոաու Նեվեշը՝ 3:1: Մինչեւ առաջին խաղակեսի ավարտը բավարացիներից աչքի է ընկել Մայքլ Օլիսեն:

Նույն ոգեւորությամբ թիմերը շարունակել են պայքարը 2-րդ խաղակեսում: Ուսման Դեմբելեն դուբլի հեղինակ է դարձել ու հաշիվն ավելի խոշոր դարձրել՝ 5:2: Սակայն «Բավարիա»-ն այդքան հեշտ չի հանձնվել ու կարողացել է 2 գոլ խփել: Մրցակցի դարպասը գրավել են Դայոտ Ուպամեկանոն ու Լուիս Դիասը:

ՊՍԺ-ն ու «Բավարիա»-ն ՉԼ-ի կիսաեզրափակչի արդյունավետության ռեկորդ են սահմանել: Մրցաշարի կիսաեզրափակչի 1-ին խաղակեսում նախկինում երբեք 5 գոլ չէր գրանցվել:

«Բավարիա»-ն եվրագավաթներում 5 գոլ է բաց թողել 1994-1995 մրցաշրջանից հետո առաջին անգամ:

ԼՈՒՐԵՐ

ԿԸՆԴՈՒՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ

Մինչեւ 20 տարեկանների 2029թ. աշխարհի առաջնությունը կընդունեն Հայաստանն ու Վրաստանը:

Հայտարարությունն արվել է ՖԻՖԱ-ի խորհրդի նիստում՝ Վանկուվերում կայանալիք 76-րդ կոնգրեսին ընդառաջ:

Հայաստանն ու Վրաստանը համատեղ հայտի մասին առաջին անգամ հայտարարել էին 2024 թվականի հունիսին:

Սա մեծ ձեռքբերում է երկու երկրների համար: Մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունը ՖԻՖԱ-ի երրորդ ամենամեծ մրցաշարն է՝ տղամարդկանց եւ կանանց աշխարհի առաջնություններից հետո, որին մասնակցում են 24 ազգային հավաքական: Մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունը պատմականորեն ծառայել է որպես հարթակ ֆուտբոլի ապագա աստղերի համար:

Հայաստանը պարտավորվել է մրցաշարի համար կառուցել 11,000 նստատեղով մարզադաշտ Վանաձորում եւ 10,000 նստատեղով մարզադաշտ Իջեւանում: Նոր մարզադաշտերը տեղակայված կլինեն Վրաստանի սահմանին մոտ՝ հեշտացնելով համատեղ կազմակերպումը:

Այս մրցաշարը մեծ հնարավորություն է ֆուտբոլի զարգացման եւ երկու երկրների ենթակառուցվածքների բարելավման համար:

ՀԻՎԱՆԴԱՑԵԼ ԷՐ ԹՈՔԱԲՈՐԲՈՎ

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Բաբալարյանը նշել է, որ լիովին գոհ կլինի միայն այն դեպքում, երբ բոլոր քաշային կարգերում ունենան մեդալակիրներ եւ դառնան թիմային հաղթող: Եվրոպայի առաջնությունում թիմը նվաճել է 5 մեդալ եւ զբաղեցրել 4-րդ տեղը:

Սուրեն Աղաջանյանը իր առաջին մեծահասակների առաջնությունում հասել է եզրափակիչ եւ դարձել արծաթե մեդալակիր: Կարեն Ասլանյանը եւ Սլավիկ Գալստյանը նվաճել են բրոնզե մեդալներ, ինչպես նաեւ Գասպար Տերտերյանը, որը եւս հաջող ելույթ է ունեցել իր նորամուտում:

Մալխաս Ամոյանը, չնայած մրցումից առաջ թոքաբորբ ունենալուն, կարողացել է հաղթահարել դժվարությունները եւ հինգերորդ անգամ դառնալ Եվրոպայի չեմպիոն:

Թիմը այժմ հանգստանում է եւ պատրաստվում առաջիկա հավաքներին ու Աշխարհի առաջնությանը:



● Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մայիսի 1-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Պիգմալիոնի էֆեկտը» ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ընդգրկվել ներքին աուդիտի ծառայություն մատուցող կազմակերպությունների ցանկում:

Արտակ Սարգսյան, 33 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով՝ ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն կազմակերպությունները, որոնք ունեն ներքին եւ (կամ) արտաքին աուդիտի գործունեության առնվազն 3 տարվա փորձ եւ առնվազն երեք աշխատող, ովքեր բավարարում են հետեւյալ պահանջներին.

1) ունեն Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում.

2) ներքին եւ (կամ) արտաքին աուդիտի ոլորտում ունեն մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ.

3) համատեղությամբ չեն աշխատում այլ ներքին եւ արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող կազմակերպություններում:

Ցանկում ընդգրկվելու նպատակով՝ կազմակերպությունները ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում.

1) դիմում.

2) վերոնշյալ պահանջները բավարարող ներքին աուդիտորի որակավորում ունեցող երեք աշխատողների մասին տեղեկություններ՝ աշխատանքային գրքույկի, աշխատանքային պայմանագրի եւ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենները.

3) տեղեկանք ներքին կամ արտաքին աուդիտի գործունեության առնվազն 3 տարվա փորձ ունենալու մասին:

ՀՀ ֆինանսների նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ բողոքներ չեն քննարկվում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Ջարինե Առաքելյան, 45 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք

- պետք է լուծվեն միայն դատական կարգով,
- վերաբերում են ոչ պետական մարմինների եւ կազմակերպությունների գործողությունների հետեւանքով մարդու իրավունքների խախտումներին,
- ներկայացվել են մեկ տարուց ավելի ուշ այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների խախտման մասին,
- Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում,
- անանուն են կամ չեն պարունակում դիմողի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը եւ գտնվելու վայրը,
- պահանջ չեն պարունակում:

Պաշտպանը դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումը սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան:

Մարդու իրավունքների պաշտպան

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Գարշահոտ իրավիճակ Նուբարաշենում. 2 օր է՝ կեղտաջուրը դիտահորից մի քանի կմ հոսում է՝ լցվելով բնակիչների ավտոտնակներ ու նկուղներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 + 12 + 17
Կոտայքի լեռներ	- 1 + 2 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 +16 + 19
Գեղարքունիք	- 1 + 3 +12 + 16
Լոռի	+ 1 + 5 + 14 + 18
Տավուշ	+ 2 + 5 +15 + 18
Արագածոտնի լեռներ	- 2 + 2 +13 + 16
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 +17 + 22

Արարատ	+ 6 + 9 +20 + 22
Արմավիր	+ 8 + 10 + 22 + 24
Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 + 13 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 + 20 + 24
Սյունիքի լեռներ	- 2 + 2 + 10 + 13
Սյունիքի նախալեռներ	+ 2 + 5 + 13 + 17
Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +18 + 22
Երեւան	+ 7 + 9 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*